Մարդու իրավունքների EXPO 2011 ցուցահանդես

02.12.2011 11:53

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում դեկտեմբերի 10-ին, ժ. 11.00-ին կազմակերպում է ցուցահանդես: Ներկայացված է լինելու 10 թեմատիկ տաղավար մարդու իրավունքների թեմայով՝ երեխաների իրավունքներ, կանանց իրավունքներ, հաշմանդամների իրավունքներ, փախստականների իրավունքներ, բռնության զոհերի իրավունքներ, խոսքի ազատության իրավունք, ազգային փոքրամասնությունների իրավունքներ, սոցիալական իրավունքներին վերաբերող խնդիրներ և այլն: Յուրաքանչյուր տաղավարի կողքին լինելու են քննարկման սեղաններ: Այդ սեղանների շուրջ ծավալվելու են քննարկումներ տվյալ տաղավարում ներկայացված նյութերի վերաբերյալ: Յուրաքանչյուր կազմակերպություն հնարավորություն կունենա ներկայացնել 2011թ-ի ընթացքում իր կատարած գործունեության արդյունքները: Քննարկումները վարելու են ՀԿ ներկայացուցիչները և ՄԻՊ աշխատակիցները քաղաքացիներին հուզող թեմաների շուրջ:

Առաջարկում ենք Ձեզ ակտիվ մասնակցություն ցուցաբերել և, օգտագործելով այս հնարավորությունը, ներկայացնել Ձեր գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

Խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետում հաստատել Ձեր մասնակցությունը՝ հետադարձ կապով կամ զանգահարելով 091-00-88-13 հեռախոսահամարով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })